2024

Քրեակատարողական և պրոբացիայի ոլորտների զարգացման ուղղությամբ 2024 թվականին ծավալած գործունեության ամփոփում

Իրավական նախաձեռնությունների կենտրոն

2024

Բովանդակություն

Կազմակերպության մասին՝ թվերով	3
Ահազանգեր՝ համակարգային մի շարք խնդիրների մասին	5
Առավել խնդրահարույց ոլորտները՝ ուսումնասիրության թիրախում	7
Վերասոցիալականացման միջոցառումների կազմակերպում՝ քրեակատարողական հիմնարկներում	8
Վերասոցիալականացման միջոցառումներին մասնակցություն՝ քրեակատարողական հիմնարկներում	9
Կազմակերպության կայքը՝ հասարակության հետ հաղորդակցվելու հարթակ	10
Համագործակցության ամրապնդում՝ գործընկեր կառույցների հետ	11
Ջանքերի ներդնում՝ ի նպաստ քրեական արդարադատության համակարգում կանանց վիճակի բարելավման	12
Փոխակերպելով ազատազրկված ԼԳԲՏ անձանց նկատմամբ վերաբերմունքը Հայաստանի քրեակատարողական հիմնարկներում	14
Ազատազրկված անձանց աշխատանքով ապահովելու նոր հնարավորություններ	15
Ջանքերի արդյունավետ ներդնում՝ ի նշանավորումն Քրեակատարողական ծառայության և Ազգային գրադարանի միջև համագործակցության մեկնարկի	16
Ազատազրկման փորձառություն ունեցող անձինք ներգրավվել են քրեական արդարադատության բարեփոխման վերաբերյալ քննարկումներում	17
Արդյունավետ համագործակցություն՝ լրատվամիջոցների հետ	19

Կազմակերպության մասին՝ թվերով

«Իրավական նախաձեռնությունների կենտրոն» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) հիմնադրվել է 2017 թվականին: Կազմակերպության գործունեության առանցքում ազատազրկված անձանց իրավունքների պաշտպանությունն է:

2024 թվականին (այսուհետ՝ հաշվետու տարի) Կազմակերպության կողմից իրականացված ծրագրերն ուղղված են եղել ազատազրկված ԼԳԲՏ անձանց տրամադրվող սոցիալական, հոգեբանական և առողջապահական ծառայությունների բարելավմանը, ազատազրկված անձանց աշխատանքային հնարավորությունների ընդլայնմանը, ազատազրկված կանանց և պրոբացիայի կին շահառուների բարեկեցության ապահովմանը, քրեակատարողական համակարգում գենդերային զգայուն քաղաքականության, ինչպես նաև քրեակատարողական և պրոբացիայի համակարգում համավարակներին գենդերազգայուն արձագանքի մեխանիզմների մշակման և ներդրման շուրջ ջատագովության իրականացմանը:

Հաշվետու տարում Կազմակերպությունը ծրագրային և ոչ ծրագրային նախաձեռնությունների շրջանակում աշխատել է 82 շահառուի հետ, որից 24-ը՝ տղամարդ, 58-ը՝ կին:

Տղամարդկանցից 9-ն ազատազրկման, 10-ը՝ ցմահ ազտազրկման դատապարտված անձինք են, որոնք պատիժ են կրում «Արմավիր», «Նուբարաշեն», «Վարդաշեն» և «Սևան» ՔԿՀ-ներում, իսկ 5-ը նախկին դատապարտյալներ են, որոնցից 1-ը նախքան ազատվելը դատապարտված է եղել ցմահ ազատազրկման:

Կանանցից 15-ը պրոբացիայի շահառու են, իսկ 43-ն ազատազրկված կանայք են՝ ինչպես կալանավորված, այնպես էլ խցային և կացարանային պայմաններում պատիժ կրող:

Հաշվետու տարում Կազմակերպությունն «Աբովյան», «Արմավիր», «Նուբարաշեն», «Սևան» և «Վանաձոր» ՔԿՀ-ներում պահվող ազատազրկված անձանց վերաբերյալ ստացել է 15 ահազանգ տարբեր իրավապաշտպանների, ազատազրկված անձանց և վերջիններիս հարազատների կողմից:

Կազմակերպության մասին՝ թվերով

Նշված ահազագների և Կազմակերպության կողմից իրականացված ծրագրերի շրջանակներում հաշվետու տարում քրեակատարողական տարբեր հիմնարկներ 15 այցելություն է կատարվել, որից 8 այց՝ «Աբովյան» ՔԿՀ, 4 այց՝ «Սևան» ՔԿՀ, 2 այց՝ «Արմավիր» ՔԿՀ և 1 այց՝ «Նուբարաշեն» ՔԿՀ:

Կազմակերպությունը նաև մարդասիրական օնություն է տրամադրել «Աբովյան» ՔԿՀ-ում պահվող 3 կնոջ: Նրանցից 2-ը օտարերկրյա քաղաքացի են, իսկ մյուս կինը, որը Հայաստանի քաղաքացի է, իր հետ պահում է նաև իր մանկահասակ երեխային: Կազմակերպությունը ձմեռային հագուստ է տվել ինչպես այդ կանանց, այնպես էլ մանկահասակ երեխային:

Ստացված ահազագերի և քրեակատարողական հիմնարկներ կատարված այցելությունների արդյունքում դուրս բերված խնդիրների շուրջ պաշտոնական պարզաբանումներ ստանալու նպատակով, ինչպես նաև ընթացիկ գործունեության համատեքստում Կազմակերպության կողմից ուղարկվել է 117 գրություն՝ ներառյալ հարցումներ, դատապարտյալների վերաբերյալ տեղեկանքներ և այլն:

Ահազանգեր՝ համակարգային մի շարք խնդիրների մասին

Կազմակերպությունն ուսումնասիրել է տեղացի և օտարերկրացի ազատազրկված անձանց, ինչպես նաև տարբեր իրավապաշտպանների կողմից ստացված ահազանգերի վերաբերյալ պատասխանատու պետական կառույցների կողմից ստացված պարզաբանումները, ինչը փաստում է, որ ոլորտի պատասխանատուների կողմից քայլեր ձեռնարկվել են դրանց կարգավորման ուղղությամբ: Այդուհանդերձ, Կազմակերպությունն արձանագրում է, որ ձեռնարկված լուծումները հատվածական բնույթ են կրել, այնինչ խնդիրներն իրենց բնույթով համակարգային են, հետևաբար խորքային և արմատական լուծում են պահանջում:

Օրինակ, «Նուբարաշեն» ՔԿՀ-ից ստացված բողոքներն ահազանգում են հիմնարկի շենքային ոչ բարենպաստ վիճակի և դրա փակման անհրաժեշտության մասին: Օտարերկրացի քաղաքացիների կողմից ստացված ահազանգերը փաստում են, որ լեզվական խոչընդոտները դեռևս ամբողջությամբ հաղթահարված չեն և դժվարացնում են մասնագիտական ծառայությունների և վերասոցիալականացման միջոցառումների հասանելիության ապահովումը: Որոշ դեպքերում անգամ կարգավորված չեն վերջիններիս՝ իրենց քաղաքացիության երկիր արտահանձնելու իրավական գործընթացները:

Դատապարտյալների կողմից ոչ միանշանակ է ընդունվել քրեակատարողական հիմնարկների ներքին կանոնակարգով նախատեսված միասնական նմուշի արտահագուստը պարտադիր կերպով կրելու պահանջը, ինչը կապված էր արտահագուստի կտորի որակի հետ:

Գործող մեխանիզմների կիրարկման արդյունքում դեռևս չի երաշխավորվում վերասոցիալականացման և կրթական ծրագրերին մասնակցած դատապարտյալների դրական վարքագիծը խրախուսելը, նրանց պատժի կրման պայմանների մեղմացումը կամ պատժից պայմանական վաղաժամկետ ազատումը՝ առավել անբարենպաստ պայմաններ ստեղծելով հատկապես ցմահ դատապարտյալներ համար: Դա, ըստ էության, ստվերում է պետության կողմից այդ ծրագրերի ծավալների ընդլայնման ուղղությամբ վերջին տարիներին գործադրված ջանքերը:

Ահազանգեր՝ համակարգային մի շարք խնդիրների մասին

Քրեակատարողական բժշկության կենտրոնի կառավարումն իրականացնող գերատեսչությունների փոփոխությունը հանգեցրել է բուժանձնակազմի կարիքների անտեսմանը և դրանով պայմանավորված՝ աշխատանքային բնականոն և արդյունավետ ընթացք ապահովող պայմանների վատթարացմանը, ինչի համատեքստում Կազմակերպությանը մտահոգել են հատկապես ազատազրկված կանանց բուժսպասարկումն իրականացնող բուժանձնակազմի աշխատանքային ոչ բարվոք պայմանները:

- Ազատազրկված անձանց կենցաղի և արտաքին աշխարհի հետ կապի ապահովման հետ կապված մի շարք խնդիրներ «Նուբարաշեն» ՔԿՀ-ում կարգավորվել են Իրավական նախաձեռնությունների կենտրոնի միջնորդությամբ
- Արդարադատության նախարարությունը պատրաստակամ է ուսումնասիրել Բանգլադեշի Ժողովրդական Հանրապետության քաղաքացի հանդիսացող դատապարտյալի փոխանցման հարցը
- Ազատազրկված օտարերկրացի անձանց տրամադրվող թարգմանչական ծառայությունը կներառի նաև բժշկական օգնության և սպասարկման ոլորտը

- Ազատազրկված անձանց տրամադրվող հագուստի որակը կբարելավվի. համապատասխան ուսումնասիրություններ են կատարվում
- Ազատազրկված կանանց բուժսպասարկումն իրականացնող բուժանձնակազմն ապահովված չէ աշխատանքային բնականոն և արդյունավետ ընթացք ապահովող պայմաններով
- Դատապարտյալի՝ հացադուլից դուրս գալը կապված էր դեղորայքից հրաժարվելու պատճառով առողջական վիճակի վատթարացման հետ

Առավել խնդրահարույց ոլորտները՝ ուսումնասիրության թիրախում

Հաշվետու տարում Կազմակերպությունն ուսումնասիրել է քրեակատարողական հիմնարկներ արգելված իրերի ներթափանցման կանխման, ինչպես նաև արտաքին աշխարհի հետ կապի և պայմանական վաղաժամկետ ազատման մեխանիզմի բարելավման ուղղությամբ ձեռնարկված գործողությունները:

Հատկանշականն այն է, որ պայմանական վաղաժամկետ ազատման մեխանիզմի բարելավման վերաբերյալ դիտարկումները և առաջարկությունները մշակել են Կազմակերպության շահառուները, ովքեր տարբեր տարիների պայմանական վաղաժամկետ ազատվել են պատժի հետագա կրումից կամ ներկայումս պատիժ են կրում քրեակատարողական տարբեր հիմնարկներում, հիմնականում ցածր անվտանգային գոտու խիստ պայմաններում:

Քրեակատարողական ծառայության համագործակցային քաղաքականությունը վստահություն է ներշնչում, որ համակարգային բնույթ կրող մյուս խնդիրները նույնպես լուծում կստանան

Դեռևս մտահոգության տեղիք են տալիս քրեակատարողական հիմնարկներ արգելված իրերի ներթափանցման կանխման ուղղությամբ ձեռնարկված գործողությունները

Պայմանական վաղաժամկետ ազատման հայեցակարգը հետնահանջ է վերասոցիալականացման քաղաքականությունից

Արտաքին աշխարհի հետ կապի պահպանման՝ Քրեակատարողական օրենսգրքով սահմանված մի շարք կարգավորումներ գործնականում չեն կիրարկվում

Վերասոցիալականացման միջոցառումների կազմակերպում՝ քրեակատարողական հիմնարկներում

Ազատազրկված անձանց ստեղծագործական և մշակութային իրավունքների արդյունավետ իրացմանը նպաստելու համատեքստում Կազմակերպությունը հաշվետու տարում վերասոցիալականացման մի շարք միջոցառումներ է կազմակերպել: Առավել նշանակալից էին Ազգային գրադարանի տնօրենի խորհրդական Ներսես Հայրապետյանի և Գրքափոխանակության բաժնի վարիչ Մայա Հայրապետյանի այցը «Սևան» ՔԿՀ, Պարույր Սևակի տուն-թանգարանի տնօրեն Սևակ Ղազարյանի այցը՝ «Աբովյան» ՔԿՀ:

- Հայաստանի ազգային գրադարանի ներկայացուցիչներն այցելեցին «Սևան» քրեակատարողական հիմնարկ
- Պարույր Սևակի տուն-թանգարանի տնօրեն Սևակ Ղազարյանը հյուրընկալվեց «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում



Վերասոցիալականացման միջոցառումներին մասնակցություն՝ քրեակատարողական հիմնարկներում

Հավատարիմ մնալով իր առաքելությանը՝ Կազմակերպությունը հաշվետու տարում նույնպես շարունակել է աջակցել ազատազրկված անձանց վերասոցիալականացման գործընթացին: Մասնակցել է 7 միջոցառման, որոնցից 5-ը տեղի են ունեցել «Արմավիր» և «Սևան» ՔԿՀ-ներում և նվիրված են եղել տարբեր տոների նշանավորմանը, կրթական ծրագրերի ամփոփմանը, դատապարտյալների ձեռքի աշխատանքների ցուցադրությանը և վաճառքին: Մյուս 2 միջոցառումներից 1-ը տեղի է ունեցել Հայաստանի նկարիչների միությունում, մյուսը՝ «Բաց հարթակ» հասարակական կազմակերպությունում, և նվիրված են եղել ցմահ դատապարտյալների ձեռքի աշխատանքների ցուցադրությանը:

- «Սևան» ՔԿՀ-ն մարդաշատ էր. դատապարտյալները տոնեցին Հայաստանի առաջին Հանրապետության օրը
- «Սևան» ՔԿՀ-ում տեղի է ունեցել 3 ցմահ դատապարտյալի աշխատանքների ցուցահանդեսը
- Դատապարտյալների թատերական խաղը «Արմավիր» ՔԿՀ էր բերել արվեստի և մշակույթի ոլորտի մի շարք ներկայացուցիչների
- Ազատազրկված անձանց ստեղծագործական աշխատանքների ցուցահանդես-վաճառքի ողջ հասույթն ուղղվել է «Զինվորի տուն» վերականգնողական կենտրոնին
- «Նշանավոր իմպրեսիոնիստները» թեմայով միջոցառում է կազմակերպվել «Սևան» քրեակատարողական հիմնարկում

Կազմակերպության կայքը՝ հասարակության հետ հաղորդակցվելու հարթակ

Հաշվետու տարում նույնպես դատապարտյալները հրապարակումներ են կատարել Կազմակերպության կայքում՝ այդպիսով ինքնարտահայտվելու և հասարակության հետ կապը պահպանելու հնարավորություն ունենալով: Կազմակերպության կայքի միջոցով հանրությանն է ներկայացվել 2 ազատազրկման և 4 ցմահ ազատազրկման դատապարտված տղամարդկանց կողմից գրված 13 հրապարակում, որոնցից 1-ը՝ բաց նամակի ձևաչափով, իսկ 3-ը՝ հարցազրույցի:

- «Արմավիր» ՔԿՀ-ում տեղի ունեցավ ցերեկույթ՝ նվիրված հայ մեծանուն գրող Պարույր Սևակի 100-ամյակին
- Կրկին չսխալվելու մղումը միտքս ուղղել է դեպի մաթեմատիկա և երկրաչափություն, որտեղ սխալներն անդառնալի չեն
- «Մենք հասկացանք, որ կարող ենք ու պարտավոր ենք անել ավելին». Դեպի նոր հորիզոններ
- «Ազատությունը ժամանակի խաղից դուրս». Մհեր Ենոքյանը մասնակցել է «ՍտեղծաԳործարան» նախագծին
- «Ոլորտը համակարգողները ձեռքները լվացել են թե Արդարադատությունից, թե Սահմանադրությունից»
- «Ո՞վ գիտի, գուցե մի գեղեցիկ օր հենց բեմը դառնա իմ կյանքի ամենակարևոր հարթակը». Կարեն Դալլաքյան
- «Որևէ կերպար մարմնավորելը քանդում է տարածաժամանակային արգելքները». Մուշեղ Մխիթարյան
- «Դասընթացը յուրատեսակ ազդակ է, որ մարդիկ կարող են փոխել և լավացնել իրենց կյանքի որակը». Վիտալիոս Խիոնիդիս
- «Կրթությունը բացում է նոր հորիզոններ, ապագայի տեսլական է ստեղծում». Կարեն Դալլաքյան
- «Ազգի անձնագիրը թերթելով». Մխիթար Մոս-Մուշեղյան
- «Ես հացադուլ եմ հայտարարում՝ հրաժարվելով նաև իմ կենսունակությունն ապահովող դեղորայքից». Ցմահ դատապարտյալ Արամ Առաքելյան
- «Հուսով են՝ հասարակությունը կհետևի իրենց օրինակին». Հարցազրույց Մխիթար Մոս-Մուշեղյանի հետ
- «Անմոռաց անուն. Սիլվա Կապուտիկյան». Մուշեղ Մխիթարյան

Համագործակցության ամրապնդում՝ գործընկեր կառույցների հետ

Հաշվետու տարում Կազմակերպության նախագահ Նարե Հովհաննիսյանն ընդգրկվել է քրեակատարողական ծառայողների ատեստավորման հանձնաժողովում: Կազմակերպությունը շարունակել է անդամակցել «Ջուրեմոնիա» հարթակին, մասնակցել է վերջինիս, ինչպես նաև միջազգային և պետական այլ գործընկեր կառույցների կողմից կազմակերպված 30-ից ավել աշխատանքային հանդիպումների և վերապատրաստման դասընթացների, որոնցից 2-ում Կազմակերպության նախագահ Նարե Հովհաննիսյանը հանդես է եկել որպես բանախոս, իսկ 1-ում՝ որպես հանձնաժողովի անդամ: Ոլորտային առավել նշանակալից 6 քննարկումների վերաբերյալ հրապարակում է տեղադրվել Կազմակերպության կայքում:

- Ներկայացվել է պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման նոր հայեցակարգը
- Տեղի ունեցավ քրեական արդարադատության համակարգում վերականգնողական մոտեցումների վերաբերյալ համաժողով
- Առողջապահությունը անազատության պայմաններում. Հայաստանի ճանապարհը դեպի լավարկված քրեակատարողական առողջապահություն
- Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային օրը ԵՊՀ-ում նշվեց ուսանողական զեկույցների մրցույթի անցկացմամբ
- «Քրեական արդարադատության համակարգում ՀԿ-ների հետ արդյունավետ համագործակցություն»
- Հանրային քննարկում ՊՎ ազատման նոր հայեցակարգով նախատեսված բալային համակարգի վերաբերյալ

Ջանքերի ներդնում՝ ի նպաստ քրեական արդարադատության համակարգում կանանց վիճակի բարելավման



Հաշվետու տարում Կազմակերպությունը շարունակել է համագործակցությունը Հայաստանում կանանց հիմնադրամի հետ: Ապրիլից մեկնարկել է «Առողջ հոգի՝ առողջ մարմնում» ենթադրամաշնորհային ծրագիրը, որն ուղղված էր ազատազրկված կանանց և պրոբացիայի կին շահառուների բարեկեցությանը և առողջության ամրապնդմանը:

Կազմակերպվել են առողջ ապրելակերպի և առողջության պահպանման, հույզերի և կոնֆլիկտների կառավարման, դրական ծնողավարման թեմաներով դասընթացներ, որոնց մասնակցել են ազատազրկված 12 կին և պրոբացիայի 15 կին շահառու: Ազատազրկված կանանց անձնական փորձառությունների և առավել շատ հուզող խնդիրների մասին 5 փոդքաստ է պատրաստվել, որոնք տեղադրվել են Կազմակերպության կայքում և յութուբի ալիքում:

- Առողջ ապրելակերպ
- Հույզերի կառավարում
- Կոնֆլիկտների կառավարում
- Առողջության պահպանում
- Ծնողավարման հմտություններ

- Աղաչում եմ՝ զգույշ ապրեք...
- Շատ եմ տանջվել ստեղ, էս կնոջ տեղ չի...
- Մայրեր, ձեր երեխաներին չթողնեք հարցական հայացքով...
- Վախենում էի, որ ինձ կմոռանան...
- Մտածում էի՝ եթե ես բարի եմ, մյուսներն էլ են բարի, բայց՝ ոչ...

Ծրագրի իրականացման ընթացքում բացահայտված խնդիրների հիման վրա կազմվել է պրոբացիայի կին շահառուների և ազատազրկման դատապարտված կանանց վիճակի բարելավման վերաբերյալ քաղաքականության համառոտագիր:

Քաղաքականության համառոտագիր
Պրոբացիայի կին շահառուների և ազատազրկման դատապարտված կանանց վիճակի բարելավման վերաբերյալ

Ջանքերի ներդնում՝ ի նպաստ քրեական արդարադատության համակարգում կանանց վիճակի բարելավման

Կազմակերպությունը մշտապես հետամուտ է ազատազրկված կանանց և պրոբացիայի կին շահառուների իրավունքների պաշտպանությանը և նրանց վերասոցիալականացմանը: Այդ ուղղությամբ հաշվետու տարում մի շարք ծրագրեր է իրականացրել:

- ✓ Կատարել է Հայաստանում առաջին հետազոտությունը, որը վերաբերում է կալանավորված և դատապարտված կանանց շրջանում COVID-19 համավարակի ազդեցությանը:

- ✓ Կատարել է քրեակատարողական համակարգում գենդերագայուն քաղաքականության մշակման և կիրառման վերաբերյալ հետազոտություն:

- ✓ Ուսումնասիրել է ազատազրկված կանանց սեռական և վերարտադրողական առողջության հիմնախնդիրները:

- ✓ Ուսումնասիրել է պրոբացիայի կին շահառուների սեռական և վերարտադրողական առողջության հիմնախնդիրները:

- ✓ Պատրաստել է քրեակատարողական և պրոբացիայի համակարգում COVID-19 համավարակին գենդերազգայուն արձագանքման քաղաքականության փաստաթուղթ:

- ✓ 2024 թվականից միացել է Վերարտադրողական իրավունքի շահերի պաշտպանության ցանցին:

Փոխակերպելով ազատազրկված ԼԳԲՏ անձանց նկատմամբ վերաբերմունքը Հայաստանի քրեակատարողական հիմնարկներում

Հաշվետու տարին Կազմակերպության համար նշանավորվել է Հայաստանում Նիդերլանդների Թագավորության դեսպանատան հետ համագործակցությամբ: Ապրիլից մեկնարկել է դրամաշնորհային ծրագրի իրականացումը, որի նպատակն էր նպաստել ազատազրկված ԼԳԲՏ անձանց բարեկեցությանը և իրավունքների պաշտպանությանը՝ բարելավելով սոցիալ-հոգեբանական և առողջապահական ծառայությունների որակը և հասանելիությունը:

Ծրագրի շրջանակներում մշակվել է ազատազրկված անձանց տրամադրվող սոցիալական, հոգեբանական և առողջապահական ծառայությունների բարելավման ուղեցույց, որի տպագիր օրինակները տրամադրվել են Քրեակատարողական ծառայությանը և քրեակատարողական հիմնարկների սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժիններին, ինչպես նաև Քրեակատարողական բժշկության կենտրոնին և վերջինիս՝ քրեակատարողական հիմնարկներում տեղակայված ստորաբաժանումներին:

Ուղեցույցը ներառում է այն հիմնական սկզբունքները և մոտեցումները, որոնցով քրեակատարողական հիմնարկների սոցիալական աշխատողները, հոգեբանները և բուժաշխատողները պետք է առաջնորդվեն՝ ազատազրկված ԼԳԲՏ անձանց հետ համապատասխան մասնագիտական աշխատանքները կազմակերպելիս:

✓ Ազատազրկված անձանց տրամադրվող սոցիալական, հոգեբանական և առողջապահական ծառայությունների բարելավման ուղեցույց

Ազատազրկված անձանց աշխատանքով ապահովելու նոր հնարավորություններ

Կազմակերպության կողմից ներկայացված գաղափարը դարձել է «Զարթիր» ֆելոուշիփի 2023 թվականի հաղթող նախագծերից մեկը:

Նախագծի նպատակն է դատապարտյալներին ապահովել աշխատանքով և կայուն եկամուտով՝ ստեղագործական հմտությունների զարգացման միջոցով:

Աջակցության շրջանակներում Կազմակերպությունը հիմնել է «Ձեռք ձեռքի» ՍՊԸ-ն, կայքում ավելացրել է «Խանութ» բաժինը և ստեղծել է ֆեյսբուքյան էջ՝ ազատազրկված անձանց ձեռքի աշխատանքներն առաջին անգամ Հայաստանում ներկայացնելով առցանց վաճառքի:

Ֆինանսական աջակցությանը զուգահեռ, կազմակերպության նախագահ Նարե Հովհաննիսյանը ֆելոուշիփի շրջանակում մասնակցել է մի շարք սեմինարների, որոնց ընթացքում հմուտ փորձագետների օգնությամբ ուսումնասիրել է ձեռներեցության կարևոր ասպեկտները:

Ջանքերի արդյունավետ ներդնում՝ ի նշանավորումն Քրեակատարողական ծառայության և Ազգային գրադարանի միջև համագործակցության մեկնարկի

Արձագանքելով Կազմակերպության հրավերին՝ Հայաստանի ազգային գրադարանի ներկայացուցիչները 2024 թվականի հուլիսի 26-ին հյուրընկալվել են «Սևան» ՔԿՀ-ում, ինչը նշանավորվեց Քրեակատարողական ծառայության հետ լայնածավալ համագործակցության մեկնարկով:

2024 թվականի հոկտեմբերի 16-ին 2 կարևորագույն հաստատությունների միջև համագործակցության հուշագիր է կնքվել: Համագործակցության շրջանակը բավականին լայն է և ներառում է գործողություններ այն հիմնախնդիրների հասցեագրման ուղղությամբ, որոնք տեղ են գտել «Գրադարանների դերը և նշանակությունը ազատազրկված անձանց համար. հայաստանյան փորձի ուսումնասիրություն» հետազոտական հոդվածում:

Հոդվածը հեղինակել է Կազմակերպության նախագահ Նարե Հովհաննիսյանը: Այն հրապարակվել է «Բանբեր Հայաստանի գրադարանների» հանդեսի 2024 թվականի 1-ին համարում և որպես այդպիսին թեմայի ուսումնասիրության առաջին ընդգրկուն փորձն է Հայաստանում:

✓ Գրադարանների դերը և նշանակությունը ազատազրկված անձանց համար. հայաստանյան փորձի ուսումնասիրություն

Ազատազրկման փորձառություն ունեցող անձինք ներգրավվել են քրեական արդարադատության բարեփոխման վերաբերյալ քննարկումներում

Ազատազրկման փորձ ունեցող անձանց տեսակետների ու կարծիքների օգտագործման միտումը քրեական արդարադատության բարեփոխումներում շարունակում է տարածվել բազմաթիվ երկրներում՝ բովանդակալից և արդյունավետ ազդեցություն ունենալով բարեփոխումների ընթացքի վրա: Ազատազրկման անմիջական փորձ ունեցող մարդիկ կարող են օգտակար լինել քրեակատարողական և պրոբացիայի համակարգում իրականացվող բարեփոխումների շուրջ քննարկումներում՝ իրենց անձնական և պրակտիկ փորձն ու գիտելիքները ներդնելու միջոցով:

Այս մեթոդը հանրային շահագրգիռ կողմերին հնարավորություն է տալիս լսել այն մարդկանց պատմությունները, ովքեր անձամբ են առնչվել համակարգի հետ, և այդ տեսանկյունից դիտարկել իրենց մշակած քաղաքականության և միջոցառումների արդյունքները: Սա նպաստում է կառավարության ջանքերին՝ ուղղված արդարադատության համակարգում փաստահեն գործողությունների միջոցով բարեփոխումներ իրականացնելուն:

Ըստ այդմ՝ հնարավոր է իրավունքների իրացման առումով ավելի լավ արդյունքների հասնել կալանավորված և դատապարտված անձանց համար ինչպես քրեակատարողական հիմնարկում, այնպես էլ փորձաշրջանի փուլում կամ արդարադատության այլ գործընթացներում: Ընդհանուր առմամբ, այս մեթոդը նպաստում է օրենքի գերակայության ամրապնդմանը և բարձրացնում է արդարադատության համակարգերի արդյունավետությունը:

Հաշվետու տարում Կազմակերպությունը համագործակցել է «Միջազգային բանտային բարեփոխումներ» կազմակերպության հետ՝ աջակցելով «Սեղանի շուրջ նստատեղերի ավելացում» ծրագրի իրականացմանը, որի նպատակն էր այս մեթոդի սկզբունքները գործարկել Հայաստանում:

Նախաձեռնությանը ներգրավվել են Կազմակերպության 5 շահառուները, ովքեր պատիժ են կրել քրեակատարողական տարբեր հիմնարկներում, ինչպես նաև առնչվել են պրոբացիայի ծառայությանը: Նրանց համար կազմակերպվել է դասընթաց, որն օգնել է զարգացնել հաղորդակցության և ունկնդրման հմտությունները, քարտեզագրել քրեական արդարադատության համակարգի խնդիրները և դրանց լուծման հնարավոր ուղիները:

Ազատազրկման փորձառություն ունեցող անձինք ներգրավվել են քրեական արդարադատության բարեփոխման վերաբերյալ քննարկումներում

Դրան հաջորդել է «Սեղանի շուրջ նստատեղերի ավելացում» թեմայով կլոր սեղան-քննարկումը, որտեղ պատասխանատու պետական կառույցների հետ ազատազրկման փորձառություն ունեցող անձինք ներկայացրել են իրենց կարծիքները և տեսակետները՝ կապված արտաքին աշխարհի հետ կապի, վերասոցիալականացման, աշխատանքի հնարավորությունների, պահման պայմանների, ազատազրկված անձանց նկատմամբ վերաբերմունքի և բողոքարկման մեխանիզմների, պատժից ազատման մեխանիզմների, պայմանական վաղաժամկետ ազատման, Պրոբացիայի համակարգի, ազատ արձակմանը նախապատրաստման և հետխնամքի, առողջապահական, այդ թվում ախտորոշիչ և թերապևտիկ ծառայությունների հասանելիության, առաջին անհրաժեշտության բուժօգնության տրամադրման, դեղերի և որակյալ բուժանձնակազմի հասանելիության և մի շարք այլ հարակից թեմաների հետ:

Ազատազրկման փորձառություն ունեցող անձանց քրեական արդարադատության բարեփոխման գործընթացում ներգրավելու սկզբունքները և էթիկական հարցերն ամփոփվել են 10 կետից բաղկացած գործողությունների ծրագրում, որտեղ մատնանշվել են նաև Կազմակերպության շահառուների անունները:

- «Սեղանի շուրջ նստատեղերի ավելացում». Քննարկում ազատազրկման փորձառություն ունեցող անձանց մասնակցությամբ
- «Քրեական արդարադատության բարեփոխման գործընթացում ներգրավելով սեփական փորձ ունեցող մարդկանց». 10 կետից բաղկացած ծրագիր

Արդյունավետ համագործակցություն՝ լրատվամիջոցների հետ

Հաշվետու տարում Կազմակերպությունը Մեդիա կենտրոնի հետ համագործակցությամբ 6 քննարկում է կազմակերպել, որոնք վերաբերել են ազատազրկված կանանց վերարտադրողական առողջության խնդիրներին, Պրոբացիայի ծառայության կարգավիճակի փոփոխությանը, պայմանական վաղաժամկետ ազատման նոր հայեցակարգին, «Պրոբացիայի մասին» օրենքի նախագծին և ազատազրկված անձանց վերասոցիալականացման գործընթացին:

«Վերականգնողական արդարադատություն. որքանո՞վ արդյունավետ է գործում համակարգը»

«Անազատության մեջ գտնվող կանանց վերարտադրողական առողջությունը. խնդիրներ, մտահոգություններ»

«Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման համակարգի վերանայման հայեցակարգ. ի՞նչը պետք է փոխվի, բայց ի՞նչն է փոխվում»

«Պրոբացիայի դերը վերասոցիալականացման և հանցագործությունների կանխարգելման գործում. նոր նախագիծ»

«Բանտից՝ հասարակություն. վերասոցիալականացումն իրականություն դառնո՞ւմ է, թե՞ ոչ»

«Վերականգնողակա՞ն, թե՞ պատժողական քաղաքականություն. ի՞նչ է առաջարկում պայմանական վաղաժամկետ ազատման հայեցակարգը»

Արդյունավետ համագործակցություն՝ լրատվամիջոցների հետ

Քրեակատարողական և պրոբացիայի ոլորտներում Կազմակերպության ձեռնարկած գործունեությունը լրատվամիջոցների կողմից լուսաբանվել են նաև հաշվետու տարում: Դա հնարավորություն է ընձեռել բարձրաձայնել արձանագրված խնդիրների մասին, ինչպես նաև տեսանելի դարձնել կատարված փոփոխությունները: Հաշվետու տարում շարունակվել է կայուն համագործակցությունն Առաջին ալիքի, Հանրային ռադիոյի, Ազատ լուրերի, Ժամը լրատվականի, «Առավոտ» օրաթերթի, Սիվիլնեթի, Պանորամա և Ասեկոսե առցանց պարբերականների հետ:

- Պրոբացիայի ծառայությունն առանձին կարգավիճակ է ստացել
- Քրեակատարողական հիմնարկներում հայտնված կանանց հիմնախնդիրները
- Վերանայվում է պատժից պայմանական վաղաժամկետ ազատման համակարգը
- Պրոբացիայի ծառայությունը նոր օրենք կունենա
- Նոր կարգավորումներ. «Պրոբացիայի մասին» օրենքում փոփոխություններ կլինեն
- Դատարանների ու բանտերի խցերը՝ անմխիթար վիճակում. ինչպես փոխել իրավիճակը
- Կյանք՝ բանտից հետո. վերաինտեգրման խնդիրներն ու վիճակագրական բացերը
- Պատժից վաղաժամկետ ազատվողներն իրական կյանքում են փորձարկում նոր հայեցակարգը

Արդյունավետ համագործակցություն՝ լրատվամիջոցների հետ

- ««Աբովյան» ՔԿՀ-ում հղի կինը դժվարությամբ է օգտվել սանհանգույցից, նոր ծննդաբերած կինը ձեռքով է լվացք արել. իրավապաշտպան»
- ««Կալանավայրում խցերը խոնավ են, տաք ջրի խնդիր կա, կեսարյանով ծննդաբերած կինը ձեռքով է լվացք անում». Նարե Հովհաննիսյան»
- «Կալանավայրում կեսարյանով ծննդաբերած կինը ձեռքով է լվացք անում, խցերը խոնավ են, տաք ջրի խնդիր կա»
- «Պրոբացիայի ծառայությունը նոր օրենք կունենա. նախարարությունն առաջարկում է ընդլայնել շահառուների կազմը»
- ««Արժանապատվությունը նվաստացնող ու անմխիթար». ինչպես են փոխվելու դատարանների ու բանտերի պայմանները»
- «ՔԿՀ-ներում վերասոցիալականացման ունիվերսալ ծրագրեր չկան»
- «Մարդը, որ ստանում է դատապարտյալի իրավական կարգավիճակ, պիտի այդ օրվանից իմանա՝ քանի քայլ և ինչ քայլեր անի, որ դուրս գա հասարակություն: ՔԿՀ-ում նա չի իմանում»
- «Կյանք՝ բանտից հետո. վերաինտեգրման խնդիրներն ու վիճակագրական բացերը»
- «Չնայած կառավարությունը փորձում է գնալ վերասոցիալականցման, սակայն պայմանական վաղաժամկետ ազատման հայեցակարգի որոշ կետեր պիտի վերանայվեն. Նարե Հովհաննիսյան»
- «Պատժից վաղաժամկետ ազատվողներն իրական կյանքում են փորձարկում նոր հայեցակարգը»

«Իրավական նախաձեռնությունների կենտրոն»

Իրավապաշտպան հասարակական կազմակերպություն

+374 55 155 300

info@prisoninitiatives.am

www.prisoninitiatives.am

https://www.facebook.com/legalinitiativesngo/

https://www.youtube.com/@prison-initiatives-2022